կուցողը ցույց տվեց հայկական ու վրացական փիլիսոփայության պատմության միահյուսումը՝ ինչպես հին ու միջին դարերում, այնպես էլ նոր շրջանում:

Միջնադարյան Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության հարցերին էին նվիրված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Կ. Զակուևի («Հունական լոգիկայի արաբերեն թարգմանությունը և լոգիկայի զարգացումը Միջին Արևելքում միջին դարերի ընթացքում»), փիլիսոփայական գիտությունների թեկնածու Շ. Վ. Խիդաշելու («Ֆեոդալական Վրաստանում հիմնական աշխարհայացքային ուղղությունների հարցի շուրջը»), փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Ս. Արեշատյանի («Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը») և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ա. Սեիդ-Զադեի («Ֆեոդալիզմի էպոխայի հասարակական-քաղաքական և փիլիսոփայական մտքի զարգացման պատմությունից Ադրբեջանում») հետաքրքիր զեկուցումները: Այդ զեկուցումների մեջ վեր հանվեցին անդրկովկասյան եղբայրական երեք ժողովուրդների անցյալի կուլտուրայի անբաժանելի մասը կազմող փիլիսոփայական կուլտուրայի հարուստ և հետաքրքիր շատ դրվագներ:

Սեսիայի աշխատանքներում համեմատաբար փոքր տեղ էին բռնում այն հարցերը, որոնք վերաբերում են անդրկովկասյան ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի զարգացման նոր և նորագույն շրջանների՝ 19-րդ դարի և մարքսիզմի տարածման դարաշրջանին. այս հանգամանքը գիտական սեսիայի դդալի թերությունն էր: Սեսիայում լսվեցին փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Գաբրիելյանի զեկուցումը, որ նվիրված էր 19-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության բնութագրմանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վ. Ա. Գազոիձեի զեկուցումը՝ «Վրացի 60-ականների մասին», ինչպես նաև փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լ. Ա. Աբրահամյանի զեկուցումը, որի թեման էր «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» և փիլիսոփայության գիտությունների թեկնածու Օ. Մ. Բոկորաձեի զեկուցումը՝ «19-րդ դարի 80—90-ական թվականներին Վրաստանում մարքսիզմի տարածման պատմության մասին»:

Միացյալ գիտական սեսիայում կարդացված զեկուցումների շուրջը ծավալված մրցքերի փոխանակությանը մասնակցած ընկերները միահամուռ կերպով պաշտպանեցին այն միտքը, որ անհրաժեշտ է առաջիկայում կանոնավոր կերպով հրավիրել նման սեսիաներ, ավելի մեծ ուշադրություն դարձնելով ժամանակակից ու հրատապ խնդիրներին, մասնավորապես դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական պրոբլեմներին:

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1956 Թ.

Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունն ընդգրկում է շատ լայն ժամանակաշրջան՝ սկսած հին և նոր քարե դարից մինչև ուշ միջնադար: Հայաստանի հնագետների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է հին և նոր քարե դարերի, բրոնզե և երկաթե դարերի ժամանակաշրջանի, ուրարտական հուշարձաններ Թեյշեբաինիի (Կարմիր բլուր), Երեբունիի (Արին-բերդ), Գառնիի, Դվինի ուսումնասիրության և Հայաստանի տերիտորիայում սփռված վիմագիր արձանագրությունների հավաքման և հրատարակման վրա: 1956 թ. Հայաստանի հնագիտական ուսումնասիրության պատմության մեջ հանդիսացավ կարևոր հայտնագործումների տարի: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ս. Սարգսյանը Աշտարակի, Էջմիածնի և Թալինի շրջաններում պեղել է հնագույն բնակավայրեր, որոնց մի մասը պատկանում է նոր քարե դարին:

Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Հ. Մարտիրոսյանը շարունակելով բրոնզե և երկաթե դարերի հուշարձանների ուսումնասիրությունը, 1956 թ. Սպիտակի շրջանում հետազոտել է կիկլոպյան մեծ ամրոցը. սրան կից դամբարանադաշտում սկսած պեղումներով հայտնաբերել է տարբեր դարաշրջանների պատկանող դերեզմանաբլուրներ,

կրոմլեխներ և քարարկղներ։ Սրանցից առավել ուշագրավ են մոտ 20 մ տրամագիծ ունեցող գերեզմանաբլուրներն ու կրոմլեխները, որոնք վերաբերում են բրոնզե դարի գեռևս չուսումնասիրված վաղ շրջանին։

Հայաստանի բրոնզե դարի մշակույթն ուսումնասիրելու տեսակետից բացառիկ նշանակություն ունեցան Սևանա լճի ցամաքած տարածության վրա, Լճաշեն գյուղի մոտ Հայաստանի պատմական թանգարանի հնագիտական արշավախմբի կատարած պեղումները, որոնք գլխավորում էր պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանը։ Լճաշենի մոտ, ուր լիճը հետ է քաշվել 1 կմ. տարածությամբ, արշավախումբը ուսումնասիրվող տարածության վրա պեղել է 14 գերեզմաններ և երկու մեծ գերեզմանաբլուրներ։ Դարեր շարունակ ջրի տակ գտնվելով այս գերեզմանները պահպանվել են անվթար և գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում թե՛ իրենց կառուցվածքով և թե՛ իրենց մեջ պարունակած նյութերով։ Պեղված գերեզմաններն ու գերեզմանաբլուրները հետաքրքիր են ոչ միայն հնագիտական նոր նյութերի, այլև թաղման եղանակի և գերեզմանների հարդարման տեսակետից։ Թաղումները կատարված են չորս ոտք ունեցող պատգարակներում։ Թաղման նմանօրինակ ձև Հայաստանի այլ վայրերում դեռևս չի հանդիպել։ Լճաշենի դամբարանադաշտում պեղված դամբարանների մեջ ամենաուշագրավը երկու մեծ գերեզմանաբլուրներն են, որոնք ստորգետնյա կառուցվածքներ են և ծածկված են հողի մակերեսից մոտ 60 սմ. բարձրություն ունեցող քարակույտով։ Լճաշենի գերեզմանաբլուրների երկարությունը 6,5—8,5 մետր է, լայնությունը 3 մետր, խորությունը 2—3 մետր։ Գերեզմանաբլուրների պատերի համար օգտագործվել են 4—5 տոննա քաշ ունեցող քարեր։ Երկու գերեզմանաբլուրներից հայտնաբերվել են հինգ փայտե սայլեր, որոնցից մեկը փոքր է։ Սայլերից երեքն ունեն երկու իսկ երկուսը չորս անիվ։ Լճաշենի առաջին մեծ գերեզմանաբլուրներից հայտնաբերված քառանիվ սայլը փայտե կամարակապ ծածկ է ունեցել։

Գերեզմանաբլուրներից երևան են բերված գիտական մեծ արժեք ներկայացնող բազմազան նյութեր։ Հայտնաբերվել են սակրեր, կացիններ, բրոնզե սուր, եռանկյունաձև, լայն, գեղեցիկ պատյաններով դաշույններ, որոնք զարդարված են օձապատկերներով, ուռուցիկ գծավոր, սեպաձև փոսիկավոր նախշերով, քանդակազարդ կոթով բրոնզե մեծ շերեփ, որի կոթի ծայրին ամրացված է է թռչնի գեղեցիկ ֆիգուրան, ինչպես նաև եղան արձանիկ. վերջինիս պատվանդանի երկու ծայրերին այծերի ֆիգուրաներն են, ազաթյա, սարդիոնե ուլունքներ, ութ ոսկե մեծ կոճակներ, փայտից պատրաստված իրեր ու առարկաներ։

Լճաշենի գերեզմանաբլուրներից հայտնաբերված հնագիտական նյութի մեջ խիստ ուշագրավ է հին արևելքին շատ բնորոշ բարձրարվեստ բրոնզե երկանիվ մարտակառքի մոդելը։ Երկու ռազմիկների ֆիգուրանները մարտակառքի վրա ներկայացված են մեկական ձեռքերով իրար բռնած, մյուս ձեռքերը դեպի գլխներին դրած սաղավարտը բարձրացրած դիրքով։ Մարտակառքին լծված ձիերը պատկերված են վագրի վիճակում։

Լճաշենի երկու մեծ գերեզմանաբլուրներում հայտնաբերվել են մարդկանց, ձիու և եզան արտասովոր մեծության զանգեր. գերեզմանաբլուրներից մեկում հայտնաբերվել է նաև աղվեսի կմաղ։ Լճաշենի մեծ գերեզմանաբլուրների նախնական ուսումնասիրությամբ հաստատվում է Սևանի ավազանի անհիշելի ժամանակներից բնակեցված լինելը, որ այդ ժամանակաշրջանում Սևանն ավելի փոքր մակերես է ունեցել։ Սևանի ավազանում բացված յուրօրինակ մշակույթը պատկանում է ավազանի բնիկներին։ Լճաշենի պեղումները հիմք են տալիս ուսումնասիրողներին Սևանա լճի ցամաքած տարածության վրա բացված գերեզմանաբլուրները վերապրելու Ն. մ. թ. 2-րդ հազ. վերջին։

15 տարի շարունակ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և Պետական Էրմիտաժի հնագիտական միացյալ արշավախումբը ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու գլխավորությամբ Երևանի հյուսիս-արևմտյան մասում, Հրազդան գետի ձախ ափին պեղել է ուրարտական քաղաք Թեյշեբաինին (Ն. մ. թ. 7-րդ դ.)։ Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդում նախորդ տարիներին բացվել են բազմաթիվ սրահներ, սենյակներ, գինու մառաններ, հացահատիկի պահեստներ, ձիթհան և այլն։ 1956 թ. պեղումների ընթացքում միջնաբերդի կենտրոնական մասում բացվել են երկու մեծ դահլիճ, սկյութական դոների մերձակայքում վեց սենյակ և մեկ միջանցք։ Հայտնաբերվել են ամենատարբեր տիպի խեցանոթներ, ուրարտական մետաղագործության բարձր մակարդակի մասին վկայող մետաղե իրեր, ինչպես նաև զենքեր։ Ուշադրության արժանի են նախորդ տարիներին և 1956 թ. հայտնաբերված գլանաձև

կնիքները, որոնք արժեքավոր նյութ են ընձեռում ուրարտական կրոնի, պաշտամունքի ուսումնասիրության համար: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուրարտական արվեստի մի սքանչելի նմուշ՝ նռան ձև ունեցող ոսկե բռնակով և ոսկե չորս գոտիներով ամանի կափարիչը, որի վրա սեպագրով հիշատակված է Արգիշտիի անունը: Վահանների, սաղավարտների, որոնդե թասերի և այլ իրերի վրա եղած արձանագրություններից բացի շատ կարևոր են կավե թրծած փոքր աղյուսակների վրա դրոշմած ուրարտական սեպագիր արձանագրությունները: 1955 թ. Թեյշեբաինիի պեղումների ընթացքում հայտնաբերվել են կավե երկու սեպագիր աղյուսակներ, որոնցից մեկի վերծանումով զբաղվում է պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին:

7 տողից բաղկացած կավե աղյուսակում, որը վերծանել է ուրարտագետ Ն. Հարությունյանը, խոսվում է Ադա երկրին Թեյշեբաինիի տված մանր և խոշոր եղջերավոր անասունների մորթիներ, բուրդ կամ բրդե հագուստներ և 1000 ստրուկներ տալու մասին: Կավե սեպագիր աղյուսակում մանր և խոշոր եղջերավոր անասուններից հիշատակված են եղը, ոչխարը և այծը:

1956 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել է 12 տողից բաղկացած մի այլ կավե սեպագիր աղյուսակ, այն ուսումնասիրվում է, և ըստ պրոֆ. Ի. Ի. Պիոտրովսկու և Ն. Հարությունյանի իրավական բնույթի փաստաթուղթ է: Աղյուսակի վրա դրոշմված կնիքի վրա պատկերված է կենաց ծառը. կնիքի վրա կա նաև սեպագիր արձանագրություն, ուր հիշատակված է Ռուսայի որդի Սարդուրի անունը:

1956 թ. միաժամանակ կատարվեցին Թեյշեբաինիի բնակելի թաղամասերի պեղումներ Հ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Քաղաքի հյուսիս-արևմտյան մասում բացված բնակարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1955—56 թթ. հետազոտված բնակելի շենքերի մնացորդները իրենց տիպով տարբերվում են նախկինում պեղվածներից, որոնցից որոշ բնակարաններ պատկանել են ռազմիկների: Խմբերից մեկն իրենից ներկայացնում է երեք բնակելի և մեկ տնտեսական բնույթի սենյակներից բաղկացած մեծ տուն, որի ճարտարապետական առանձնահատկությունները, շինարարական տեխնիկան և երևան բերված հնագիտական նյութերը հաստատում են, որ այն ուրարտական է: Սրան հարող երկրորդ խումբը բաղկացած է փոքր դետաքարերից կառուցված մի շարք մեկ կամ երկու սենյակ ունեցող բնակարաններից, որոնք պարունակում են տեղական, բնորոշ խեցեղեն: Այս խումբը շինարարական տեխնիկայով և մի քանի ճարտարապետական մանրամասներով խիստ կերպով տարբերվում է մյուս խմբից, որը և հիմք է տալիս ոչ ուրարտական համարելու այն: Քաղաքի թաղամասերի պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը հավաստում են, որ Թեյշեբաինի քաղաքի բնակչությունը սոցիալական և էթնիկ տեսակետից միատարր չի եղել, որ Թեյշեբաինի քաղաքի այդ շրջանը երկրորդ հազարամյակի վերջերից զբաղեցված է եղել բնիկներով, որոնց մի մասը ուրարտական քաղաքում շարունակել է ապրել մինչև Ն. մ. թ. 6-րդ դ. սկիզբը: Ն. մ. թ. 5-րդ դ. թաղումների և վերջին տարիների պեղումներով հայտնաբերված հուշարձանների նյութերը կապվում են վաղ հայկական մշակույթի հուշարձանների հետ:

Դեռևս 1950 թ. Կարմիր բլուրի հնագիտական արշավախմբի մի ջոկատ, պրոֆ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ սկսեց հետախուզական պեղումներ կատարել Արինբերդում (Երերունի, Ն. մ. թ. 8-րդ դ.): Հետախուզական աշխատանքների ժամանակամիջոցում հայտնաբերվեցին ուրարտական երկու սեպագիր արձանագրություններ, բացվեց կենաց ծառի և այլ մոտիվներով զարդարված որմնանկարներով, 45 մետր երկարություն ունեցող դահլիճ, որոնք արդեն ինքնին խոսում էին Երերունիի հետաքրքիր հուշարձան լինելու մասին: 1956 թ. վերջինիս պեղումները ընդարձակվեցին վերածվելով ինքնուրույն արշավախմբի, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի և Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի ջոկատներով, ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանի ընդհանուր ղեկավարությամբ: 1956 թ. մեծ արդյունքներ տվեցին Երերունիում (որից ինչպես պարզված է, ծագում է Երևան անունը) կատարված պեղումները: Պեղումների ընթացքում բացվել է հինգ մուտք ունեցող մի ընդարձակ շենք, որից ոչ հեռու բացվել է մի այլ, տուֆ քարով շարված շենքի ճակատամասը: Շենքի շքամուտքի երկու կողմերում մեկական սրբատաշ քարի վրա փորագրված է միևնույն բովանդակությամբ ուրարտական երկու սեպագիր արձանագրություն, որն ընթերցվել է Պատմության ինստիտուտի ջոկատի ղեկավար Մ. Իսրայելյանի կողմից և վերաբերում է «Սուսի» կոչվող շենքի կառուցմանը, ուրարտական Արգիշտի 1-ին թագավորի ժամանակ: Այդ բառ-

անկյունաձև շենքը դրավում է 40 մ² տարածություն։ 1956 թ. Երևանի պեղումներով հայտնաբերված նյութի մեջ խիստ ուշագրավ են որմնանկարները, մանավանդ երկու արծաթե դրամները, որոնց վրա դրվագված են բաց երախով, առյուծի դյուխը պատկերող ֆիդուրաներ։

Թեյշեբաինիի և Երևանի պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութի ուսումնասիրությունը կհանդեցնի բազմակողմանի հետաքրքիր արդյունքների, կպարզի Ուրարտուի տնտեսության, նյութական և հոգևոր մշակույթի, կենցաղի, ուրարտական պետության հարևան երկրների հետ ունեցած կապերի, ընդհանրապես Ուրարտուի պատմության հետ կապվող շատ հարցեր։

Հայաստանի հնագիտական ուսումնասիրության մեջ ամենախոշոր բացերից մեկը երկար ժամանակ մնում էր վաղ հայկական, առհասարակ հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության վիճակը։ Այդ բացի վերացումն իրականացվեց 1949 թ., երբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հնագիտական արշավախումբը, պատմական գիտությունների դոկտոր Բ. Առաքելյանի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ վաղ հայկական ամրոց՝ Գառնիի սիստեմատիկ պեղումներին։ Ազատ գետի գեղատեսիլ ձորի վրա բարձրացող դարավանդի վրա կառուցված Գառնի ամրոցը, Հայաստանի չափազանց հետաքրքիր հնագիտական հուշարձաններից մեկն է, որը նյութեր է պարունակում էնեոլիթից սկսած մինչև ուշ միջնադար։ Սակայն առավել կարևոր նյութերը տալիս է վաղ հայկական շրջանի առաջին դարերի կուլտուրական շերտը։ Պեղումների առաջին տարիներին բացվեց ամրոցի պարսպապատն իր 14 աշտարակներով։ 1953–1954 թթ. Գառնի ամրոցի պեղումները նշանավորվեցին վաղ հայկական ժամանակաշրջանի երեք ճարտարապետական հուշարձանների բացումով, որոնցից ամենահետաքրքիրը, հեթանոսական տաճարից 50 մետր հյուսիս-արևմուտք բացված մոզայիկ հատակով բաղնիքն է։ Բաղնիքը բաղկացած է 3 սենյակից. չորսը լոգարաններ են կրկնակի հատակով, որոնց միջև մտնող տապը և ծուխը տարածվում էր բաղնիքը, իսկ մի սենյակը ծառայել է որպես հանդերձարան-հանգստարան, որը և ունեցել է մոզայիկ հատակ (2,90×2,90)։ Մոզայիկ հատակի վրա պատկերված են ծովային աստվածություններ և էակներ, կենտրոնական մասում «Ոչինչ չստանալով աշխատեցինք» հունարեն արձանագրություն է։ Արշավախմբի ղեկավար Բ. Առաքելյանը բաղնիքը թվագրում է 3-րդ դարով։ 1955 թ. բաղնիքից հարավ բացվեցին մի այլ ավելի խոշոր շենքի պատերը, որոնք մտնում են թագավորական ամրոցի նախորդ տարիներին բացված պալատական ճարտարապետական խմբի մեջ։ Վերջինիս մոտ հայտնաբերվել են մշակված մարմարի մի քանի բեկորներ, որոնք ակնհայտորեն կապվում են շենքի ներքին հարդարման հետ։ Խիստ ուշագրավ է ամրոցի արևելյան մասում պարսպապատի մոտ բացված, շենքի հատակին հայտնաբերված 1—2-րդ դդ. հռոմեական դանձը (49 դրամ)։ Այս նույն սենյակի հատակին գտնվել են մարմարե արձանի և հարթաքանդակների բեկորներ։ 1956 թ. բացվեց բաղնիքին դեռևս հնում կցված մի սենյակ. հայտնաբերվեցին տարբեր ժամանակների պատկանող հնագիտական նյութեր, նոր տիպի կավե և ապակե անոթներ։ Գառնի ամրոցի միջնադարյան շերտերում բացվեցին միջնադարյան շենքերի մնացորդներ. այդ շերտերում գտնվեցին մետաղե իրեր, հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներ և այլն։ Գառնի ամրոցի պեղումները տարեց-տարի նորանոր նյութեր են երևան բերում. վերջիններիս ընձեռած հարուստ հնագիտական նյութը հիմք է տալիս պարզելու հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնույթը, երկրի նյութական և հոգևոր մշակույթին, ժողովրդի կենցաղին վերաբերող հարցերը։

Էջմիածնի մայր տաճարի սկզբնական կառուցվածքի բնույթի, նրա կրած հետագա վերակառուցումների հարցերի լուսաբանության համար, հետաքրքիր արդյունքներ տվին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի ավագ գիտ. աշխատող, ճարտարապետության պատմաբան Ա. Սահինյանի կատարած պեղումները։ Ա. Սահինյանը Երևան բերած իր նյութերով հաստատում է, որ Էջմիածնի մայր տաճարի այժմյան գմբեթակիր մույթերի խարիսխների տակ գոյություն ունեն մի այլ առավել հնագույն շենքի խարիսխներ, որոնք պատկանում են թագակապ ծածկով բազիլիկ կառուցվածքի։ Սահինյանը գտնում է, որ հնագույն շենքի խարիսխների վրա դրված նոր խարիսխները պատկանում են գմբեթակիր շենքի, մշակման տեսակետից նման են 5-րդ դարի համանման մշակումներին, իսկ ներքևի

խարիսխների նկատմամբ ունեցած դիրքով ճշտությամբ ներկայացնում են Ղ. Փարպեցու հաղորդած 5-րդ դ. վերջերի վերակառուցման պատկերը, որով և հաստատվում է վերջինիս վկայության իսկությունը: Այսպիսով ապացուցվում է, որ դեռևս 5-րդ դ. Վահան Մամիկոնյանի օրոր ստեղծվել է, թե դրսից, թե ներսից խաչաձև հորինվածք ունեցող կենտրոնագմբեթ շենքի նոր տիպը: Պեղումների ընթացքում, հողի լիցքի մեջ տաճարի հնագույն շերտերում հայտնաբերվել են դույնդդույն սմալտայից պատրաստված մեծ քանակությամբ մոզայիկ հատիկներ: Հատիկների մանրությունը, սմալտայի բարձր որակը խոսում են այդ մոզաիկայի հին և բարձրարվեստ լինելու մասին: Սահինյանը մոզաիկան թվագրում է 4—5-րդ դդ. Պեղումների ընթացքում երևան էր բերվել նաև մարմարե ափսեի բեկոր, կղմինդրների, հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներ և այլն:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների նյութական մշակույթի, արհեստների ու առևտրի վերաբերյալ հսկայական նյութեր են հայտնաբերված Դվին քաղաքի, դեռևս 1937 թ. սկսված և այժմ պատմական գիտությունների դոկտոր, Կ. Ղաֆադարյանի գլխավորությամբ կատարվող պեղումների շնորհիվ: Դվինում բացվել են վաղ միջնադարյան (4—7-րդ դդ.) և միջնադարյան ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների մնացորդներ, որոնք խոշոր նշանակություն ունեն Հայաստանի ճարտարապետության պատմության ուսումնասիրության տեսակետից: Միջնաբերդում կատարված պեղումներով բացվել են 9—11-րդ դդ. մեծ շենքի հիմնապատերը և մի քանի փոքր սենյակներ, շարունակվել են անցյալ տարիներին բացված սյունադարդ, ամենյան հավանականությամբ աշխարհիկ շենքի պեղման աշխատանքները:

Նախորդ տարիների և 1956 թ. պեղումներով հայտնաբերվել են մեծ քանակությամբ մետաղե, կավե և այլ առարկաներ, միջնադարյան ոսկերչության բացառիկ նմուշ հանդիսացող զարդեր: Առանձնապես խոշոր են միջնադարյան խեցեղենի դյուտերը՝ բարձրորակ հախճապակին, հասարակ, զարդարուն և ջնարակած խեցեղենի նմուշները և այլն: Դվինի պեղումներով հայտնաբերվել են մոտ հազարի հասնող սասանյան, բյուզանդական, արաբական, սելջուկյան, վրացական, մոնղոլական և այլ դրամներ: Դվինից հայտնաբերված նյութերը թույլ են տալիս խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրելու հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերը, լուսաբանելու քաղաքային բնակչության կյանքն ու կենցաղը և հայկական քաղաքների տնտեսական ու մշակութային կապերը հարևան երկրների հետ:

Տաղանդավոր հայ ժողովուրդն իր հայրենի հողի վրա երկար ու ձիգ դարերի ընթացքում բազմատեսակ, երփներանգ քարերից կառուցել է բազմաքանակ հրաշակերտ ճարտարապետական հուշարձաններ, կերտել է անթիվ զարդարուն քարակոթողներ, որոնց վրա պահպանվել են հայերեն հազարավոր վիմագիր արձանագրություններ, որոնք բացառիկ նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության, տնտեսական կյանքի, մշակույթի ուսումնասիրության համար: 1956 թ. ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արշավախումբը, Հայաստանի հնագիտության լավագույն գիտակ Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ շարունակել է Սյունիքի արձանագրությունների հավաքման աշխատանքները: Արշավախումբը Ղափանի, Մեղրիի և հարևան շրջաններում հավաքել և վերծանել է ավելի քան 300 վիմագիր արձանագրություններ, որոնց զգալի մասը վերաբերում է 10—13-րդ դդ. Պատմագիտական ընդհանուր նշանակությունից բացի, այս տարի հավաքված արձանագրություններում հիշատակված են մինչ այժմ անհայտ 10 միջնադարյան հայ ճարտարապետներ և քանդակագործ վարպետներ: Բարխուդարյանին հաջողվել է հայտնաբերել Քիրամ կաղմոզի 50-ից ավելի բարձրարվեստ, քանդակազարդ խաչքարեր և տապանաքարեր: Այժմ ձեռնարկված են հայերեն վիմագիր արձանագրությունների ժողովածու կազմելու աշխատանքները (Կ. Ղաֆադարյան, Ս. Բարխուդարյան), որին մասնակցում է ականավոր հայկարան, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

1956 թ. հնագիտական տարին փակվեց Երևանում հոկտեմբերին կայացած Կովկասի հնագիտությանը նվիրված կոնֆերանսով, որին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Հյուս. Կովկասի, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ավելի քան 200 հնագետներ և պատմաբաններ: Կոնֆերանսը հանրագումարի բերեց Կովկասի հնագիտության գծով կատարված աշխատանքները, նշեց անելիքների հիմնական ուղղությունները, ամրապնդեց Կովկասի հնագիտությամբ զբաղվողների կապերը:

ԴՐ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ